# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«04» սեպտեմբերի 2015 թվական N 139–Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ «ԺՊԻՏ», «ԳՈՀԱՐ», «ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՆԿԻԿ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Գյումրու «Ժպիտ», «Գոհար», «Գյումրու մանկիկ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում ընթացիկ վերանորոգումներ իրականացնելու, ինչպես նաև գույքի ձեռքբերման անհրաժեշտությունից, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրիի համայնքային ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների հիմնավորումները՝ (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի օգոստոսի 20-ին Դ/ 10273-15 թվագրմամբ, օգոստոսի 21-ին Դ/10328-15 թվագրմամբ, օգոստոսի 25-ին Դ/10466-15 թվագրմամբ) **համայնքի ավագանին որոշում է.**

1. Գյումրու «Ժպիտ», «Գոհար», «Գյումրու մանկիկ» համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում ընթացիկ վերանորոգումներ իրականացնելու, ինչպես նաև գույք ձեռք բերելու նպատակով տրամադրել 1 000000 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 9/6/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ____________

Գ.Ադամյան ____________

Ա.Բադեյան ____________

Ա. Բաղրամյան ____________

Մ. Գաբոյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Հ. Խաչատրյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Վ. Հունանյան ____________

Ռ. Մխիթարյան ____________

Վ. Շիրինյան ____________

Մ. Սահակյան ____________

Տ. Փանոսյան ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«04» սեպտեմբերի 2015 թ.**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2015 թվականի սեպտեմբերի 04 -ի
N 139 -Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ

## ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

| ՀՀ | ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ | ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑ (ՀՀ ԴՐԱՄ) |
|---|---|---|
| 1. | «Ժպիտ» ՀՈԱԿ | 400.000 |
| 2. | «Գոհար» ՀՈԱԿ | 500.000 |
| 3. | «Գյումրու մանկիկ» ՀՈԱԿ | 100.000 |
| 4. | Ընդամենը | 1.000.000 |

ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Հ. ՍՈՒԼԹԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*էլ. փոստ gyumri@gyumri.am*

# ՈՐՈՇՈՒՄ

**«04» սեպտեմբերի 2015 թվական N 140-Ա**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐՈՒ <<ԿՈՒՄԱՅՐԻ>> ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ելնելով Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարանի գիտական ցուցադրությունը թարմացնելու, մեծ բանաստեղծի ծննդյան 140-ամյա հոբելյանը հավուր պատշաճի կազմակերպելու անհրաժեշտությունից, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և հիմք ընդունելով Գյումրու <<Կումայրի>> պատմամշակութային արգելոց-թանգարան համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ստեփան Տեր-Մարգարյանի ներկայացրած նախահաշիվը՝ **համայնքի ավագանին որոշում է**.

1. Հատկացնել Գյումրու <<Կումայրի>> պատմամշակութային արգելոց-թանգարան համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը 650000 (վեց հարյուր հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ Գյումրու Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարանի գիտական ցուցադրությունը թարմացնելու, մեծ բանաստեղծի ծննդյան 140-ամյա հոբելյանը հավուր պատշաճի կազմակերպելու նպատակով թվով 8 (ութ) ապակյա ցուցափեղկեր պատրաստելու համար՝ համաձայն հավելվածի:
2. Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտական բաժնի պետին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/2/2 գործառական դասակարգման (4819) <<Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին>> տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ____________

Գ.Ադամյան ____________

Ա.Բադեյան ____________

Ա. Բաղդամյան ____________

Մ. Գաբոյան ____________

Ա.Գրիգորյան ______________________

Վ. Եդիգարյան ______________________

Հ. Խաչատրյան ______________________

Տ.Հովհաննիսյան ______________________

Վ. Հունանյան ______________________

Ռ. Մխիթարյան ______________________

Վ. Շիրինյան ______________________

Մ. Սաhակյան ______________________

Տ. Փանոսյան ______________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ս. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«04» սեպտեմբերի 2015 թ.**

Հավելված՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Գյումրի համայնքի ավագանու
2015 թ. սեպտեմբերի 04-ի N 140-Ա որոշման

# ՆԱԽԱՀԱՇԻՎ

## Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարանի գիտական ցուցադրությունը թարմացնելու նպատակով պատվիրված թվով ութ ապակյա ցուցափեղկերի պատրաստման

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
|---|---|---|---|---|---|
| h/h | Անվանումը | քանակը | չափսերը | միավորի արժեքը (ՀՀ դրամով) | ընդհանուր գումարը (ՀՀ դրամով) |
| 1. | Թանգարանային ցուցափեղկեր | 2 | 100X60X95 | 75000 | 150000 |
| 2. | Թանգարանային ցուցափեղկեր | 5 | 130X60X95 | 80000 | 400000 |
| 3. | Թանգարանային ցուցափեղկ | 1 | 210X90X90 | 100000 | 100000 |
| | Ընդամենը | 8 | | 255000 | 650000 |

«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի տնօրեն՝ Ս. ՏԵՐ-ՄԱՐԳԱՐՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

## ՈՐՈՇՈՒՄ

**«04» սեպտեմբերի 2015 թվական N 141–Ա**

### ԱՐԹՈՒՐ ՆԻԿՈԼԱՅԻ ՉԻԼԻՆԳԱՐՈՎԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով հայազգի աշխարհահռչակ գիտնական Արթուր Նիկոլայի Չիլինգարովի՝ գիտության, հասարակական-քաղաքական կյանքի ամենատարբեր ոլորտներում ունեցած մեծ ավանդը, վաստակած միջազգային հեղինակությունն ու համբավը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 24-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 12-րդ գլխի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Արթուր Նիկոլայի Չիլինգարովին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչումը:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ____________

Գ.Ադամյան ____________

Ա.Բադեյան ____________

Ա. Բաղրամյան ____________

Մ. Գաբոյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Հ. Խաչատրյան ____________

Տ.Հովհաննիսյան ____________

Վ. Հունանյան ____________

Ռ. Մխիթարյան ____________

Վ. Շիրինյան ____________

Մ. Սահակյան ____________

Տ. Փանոսյան ____________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«04» սեպտեմբերի 2015 թ.**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
# ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

*3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1*
*Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06*
*Էլ. փոստ gyumri@gyumri.am*

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«04» սեպտեմբերի 2015 թվական N 142–Ա**

**ՖԵԼԻՔՍ ՎՐՈՒՅՐԻ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ**
**«ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության վաստակավոր բժիշկ Ֆելիքս Վրույրի Գրիգորյանի՝ պրակտիկ բժշկագիտության բնագավառում ունեցած մեծ ավանդը, տարիների ընթացքում վաստակած բարձր հեղինակությունն ու համբավը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 24-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 12-րդ գլխի դրույթներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Ֆելիքս Վրույրի Գրիգորյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչումը:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ________

Գ.Ադամյան ________

Ա.Բադեյան ________

Ա. Բաղրամյան ________

Մ. Գաբոյան ________

Ա.Գրիգորյան ________

Վ. Եդիգարյան ________

Հ. Խաչատրյան ________

Տ.Հովհաննիսյան ________

Վ. Հունանյան ________

Ռ. Միթարյան ____________________

Վ. Շիրինյան ____________________

Մ. Սահակյան ____________________

Տ. Փանոսյան ____________________

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

**ք.Գյումրի**
**«04» սեպտեմբերի 2015 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
Էլ. փոստ gyumri@gyumri.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«04» սեպտեմբերի 2015 թվական N 143–Ա**

## ՀԱՅԿ ՍԱՐԳՍԻ ՔՈԹԱՆՋՅԱՆԻՆ «ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻ» ԿՈՉՈՒՄ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով գեներալ-մայոր Հայկ Սարգսի Քոթանջյանի՝ Հայաստանի Հանրապետության ռազմական քաղաքականության հիմունքների, ազգային անվտանգության հայեցակարգի գիտական ձևավորման, Հայաստանի Հանրապետության զինված ուժերում և միջազգային կառույցներում ունեցած գիտապրակտիկ գործունեության նշանակալից ավանդը, աղետի գոտու վերականգնման գործում ակտիվ մասնակցությունը, վաստակած հեղինակությունն ու համբավը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 24-րդ կետով, Գյումրի համայնքի ավագանու կանոնակարգի 12-րդ գլխի դրույթներով, հիմք ընդունելով «Շիրակ Հայրենակցական Միավորում» հասարակական կազմակերպության վարչության նախագահ Վարազդատ Ավոյանի գրությունը (քաղաքապետարանում մուտքագրված 2015 թվականի մայիսի 4-ին N 4906 թվագրմամբ)՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հայկ Սարգսի Քոթանջյանին շնորհել «Գյումրու պատվավոր քաղաքացի» կոչումը:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ____________

Գ.Ադամյան ____________

Ա.Բադեյան ____________

Ա. Բաղրամյան ____________

Մ. Գաբոյան ____________

Ա.Գրիգորյան ____________

Վ. Եդիգարյան ____________

Հ. Խաչատրյան

Տ.Հովհաննիսյան

Վ. Հունանյան

Ռ. Մխիթարյան

Վ. Շիրինյան

Մ. Սահակյան

Տ. Փանոսյան

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«04» սեպտեմբերի 2015 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

3104 , Գյումրի, Վարդանանց հրապարակ 1
Հեռ. (+374 312) 2-22-00; Ֆաքս (+374 312) 3-26-06
էլ. փոստ gyumri@gyumri.am

# ՈՐՈՇՈՒՄ

**«04» սեպտեմբերի 2015 թվական N 144–Ա**

**2015 ԹՎԱԿԱՆԻ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՌԱՎԵԼ ԲԱՐՁՐ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ՑՈՒՅՑԱԲԵՐԱԾ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎՆԵՐ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

2015 թվականի հունիս-օգոստոս ամիսներին գյումրեցի ծանրորդներ Համլետ Մնացականյանը և Աիդա Մանուկյանը Եվրոպայի ծանրամարտի պատանիների առաջնությունում նվաճեցին ոսկե մեդալներ, իսկ Ռաֆայել Հարությունյանն արծաթե մեդալ:

Սամբոյի Եվրոպայի մեծահասակների առաջնությունում Մաքսիմ Մանուկյանը դարձավ 3-րդ մրցանակակիր:

Հունա-հռոմեական ըմբշամարտիկ Էդգար Խաչատրյանը դարձավ 3-րդ մրցանակակիր, իսկ գյումրեցի ձյուդոիստ Հովհաննես Դավթյանը դառնալով ձյուդոյի աշխարհի մեծ սաղավարտի մրցումների հաղթող՝ վաղաժամկետ ձեռք բերեց Օլիմպիական խաղերի մասնակցության վարկանիշ:

Գյումրեցի մարզիկներին և նրանց մարզիչներին խրախուսելու նպատակով, ղեկավարվելո <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-ր հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. 2015 թվականին Եվրոպայի և աշխարհի չեմպիոններ և մրցանակակիրներ դարձած մարզիկների և նրանց մարզիչներին շնորհել դրամական պարգևներ 1.020.000 (մեկ միլիոն քսան հազա Հայաստանի Հանրապետության դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2.Հանձնարարել Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսա-տնտեսագիտակա բաժնի պետին՝ գումարի հատկացումը կատարել Գյումրի համայնքի 2015 թվականի բյուջեի 8/1 գործառական դասակարգման (4729) <<Այլ նպաստներ բյուջեից>> տնտեսագիտակա դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

**Կողմ (14)** **Դեմ (0)** **Ձեռնպահ(0)**

Ա. Ադամյան ____________

Գ.Ադամյան ____________

Ա.Բադեյան ____________

Ա. Բաղդամյան ____________

Մ. Գաբոյան ____________

Ա.Գրիգորյան ____________________

Վ. Եդիգարյան ____________________

Հ. Խաչատրյան ____________________

Տ.Հովհաննիսյան ____________________

Վ. Հունանյան ____________________

Ռ. Մխիթարյան ____________________

Վ. Շիրինյան ____________________

Մ. Սահակյան ____________________

Տ. Փանոսյան ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** ____________________ **Ս. ԲԱԼԱՍԱՆՅԱՆ**

**ք.Գյումրի**
**«04» սեպտեմբերի 2015 թ.**

**Հավելված**

*Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի*
*Գյումրի համայնքի ավագանու 2015 թվականի*
*սեպտեմբերի 04-ի N 144-Ա որոշման*

**ՑՈՒՑԱԿ**

**2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ-ՕԳՈՍՏՈՍ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԵՎՐՈՊԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՐՀԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՄԵԴԱԼՆԵՐ ՆՎԱՃԱԾ ԳՅՈՒՄՐԵՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ԵՎ ՆՐԱՆՑ ՄԱՐԶԻՉՆԵՐԻ**

1. Մնացականյան Համլետ-ծանրամարտ, Եվրոպայի պատանիների առաջնություն, I տեղ-100.000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
2. Մանուկյան Աիդա - ծանրամարտ, Եվրոպայի պատանիների առաջնություն, I տեղ -100.000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
3. Հարությունյան Ռաֆայել- ծանրամարտ, Եվրոպայի պատանիների առաջնություն, II տեղ -70.000 (յոթանասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
4. Խաչատրյան Էդգար -հունա-հռոմեական ըմբշամարտ, երիտասարդների առաջնություն, III տեղ - 100.000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
5. Մանուկյան Մաքսիմ-սամբո, մեծերի առաջնություն, III տեղ -100.000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
6. Դավթյան Հովհաննես -ձյուդո, աշխարհի մեծ սաղավարդ, I տեղ -200.000 (երկու հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ

**Մարզիչներ**

1. Սիմոնյան Կարեն-ձյուդո-100.000 (հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
2. Գրիգորյան Երվանդ-սամբո-50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
3. Գևորգյան Անդրանիկ-հունա-հռոմեական ըմբշարտ-50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
4. Փիլոյան Հակոբ-ծանրամարտ-50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
5. Ներսիսյան Արտաշես - ծանրամարտ-50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ
6. Գրիգորյան Գագիկ- ծանրամարտ-50.000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ

---------------------------------------------

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 1.020.000 (մեկ միլիոն քսան հազար) Հայաստանի Հանրապետության դրամ

Գյումրու քաղաքապետարանի աշխատակազմի
Ֆիզկուլտուրայի և սպորտի բաժնի պետ՝

**Մ.ՂԱԶԱՐՅԱՆ**